ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ք. Եղեգնաձոր

«21» Հոկտեմբեր 2014թ

N 44

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ , ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, << Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի բ/ ենթակետի պահանջով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության << Քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու մասին>> 1998 թ. հոկտեմբերի 12-ի № 624 որոշումը և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից իրականացված պլանային ստուգումների հիման վրա ներկայացված արձանագրության

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Առաջարկել Ագարակաձոր համայնքի ղեկավար Պ.Միրզոյանին աշխատանքներ իրականացնել համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության (4 մարտի 2010թ. № 208-Ն) որոշման կատարման նկատմամբ , պատվիրել բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագիծ և աշխատանքներ տանել հողերի ժամանակավոր սխեմաների կազմման ուղղությամբ, որը հնարավորություն կտա կառուցապատման աշխատանքների իրականացմանը համայնքում և կնպաստի քաղաքաշինական նպատակով հողօգտագործման կանոնակարգման և արդյունավետ կառավարման ապահովմանը, իսկ նշված փաստաթղթերի բացակայության դեպքում կառուցապատման աշխատանքները կարող եք իրականացնել ՀՀ կառավարության 1998թ. հուլիսի 30-ի № 479 որոշմամբ սահմանված կարգի պահանջներին համապատասխան

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Հովսեփյանի վրա

Է. ՂԱԶԱՐՅԱՆ